

Պեշիկթաշի մեջ մաս մը կայ, որ վաճառականութեամբ կամ արհեստով կապրի, մաս մ'ալ կայ, որ չգիտցուիք ինչպէս կապրի, մաս մ'ալ կայ, որ պարտք դիզելով կապրի, մաս մ'ալ կայ, որ շաքաթականով կամ ամսականով կապրի: Այս վերջինն ամենէն մեծ մասն է, որ մեծ վարժութիւն ըրած է՝ գետինը ծռելով գետնէն... բա՛ն մը առնելու... ո՛չ, գետնէն բարեւ առնելու եւ տալու: Այս մասին բերանէն բնաւ չպակասիր *սիկառան* եւ *ծառայ եմը*: Եթէ օր մը հարիւր անգամ *ծառայ եմ* չըսէ՝ հետեւեալ օրը պաշտօնէն կհանուի: Այս խեղճերը պաշտօնէ չզրկուելու համար վարժապետի մը երգ մը շինել տուած են *ծառայ եմ*՝ նաքարաթով եւ ամեն իրիկուն սեղանը չնստած այդ երգը կերգեն: Միջագիւղ ալ կերգեն նոյն երգը *Շիրքէթի Խայրիլէյի* մեջ պաշտօն վարող երիտասարդներն, որոնք Միջագիւղի ազգայիններուն կէսը կկազմեն:

Ով որ այս թաղը կ'երթայ՝ պարտաւոր է արատ հանող փոշիէն քիչ մը հետը տանելու, վասնզի քիչ մարդ կայ, որ այս թաղը մտած ըլլայ եւ վրան արատ քսուած չըլլայ. հոս արատն առատ է:

Անցեալ դարէ մնացած փաստաբաններ կգտնուին հոս եւ որոնք Աստուծոյ վերաբերեալ դատերը կփաստաբանեն: Ասոնք ժողովրդեան կողմէ վաւերացուած փաստաբաններ ըլլալով՝ Պեշիկթաշի ճարտասանները կհամարուին:

Աղաչելու եւ պաղատելու այնքան վարժուած են, որ երբ այդ խղճուկ բարեւներով դէմդ կելնեն՝ կստիպուիս կամ պաշտօն մը կամ քսակդ անոնց տալ. ասոնք երբ ուզեն՝ իրենց աչերէն արտասուք ալ կհանեն:

Երիտասարդութիւն չկայ հոս. երբ ազգային խնդրոյ մը համար խորհրդակցիլ հարկ ըլլայ՝ Սամաթիայէն կամ ուրիշ թաղէն մարդ կկանչեն. իսկ եթէ թաղն տեղէն առնես տանիս՝ ժողովուրդը ձայն չհաներ. այնքան խաղաղասէր է:

Ինքզինքն ազնուական կարծող մասն առանց գինետուն կամ նպարավաճառի մը խանութքը հանդիպելուն շիտակ տուն կ'երթայ. իսկ մնացած մասերը գինետուն ալ կ'երթան զբօսարան ալ եւ նարտ կամ թուղթ կխաղան կիրակի օրերը մինչեւ երեկոյ: Ոմանք ալ գիշերները մէլմէկ տուն հաւաքուելով *բրէժա* կխաղան:

Ասոնք, երբ փողոցի մեջ գտնուին՝ իրենց բարեկամը չտեսնելու կզարնեն եւ բարեւ տալու կը վախնան, որ չըլլայ թէ իրենց բարեկամին խահուէ մը հրամցնելով քսան փարա վատնեն: